

(Հայ Վանքայր Է Թորթիա, Մասն Ա., էջ 38):
 Եւ կը յարէ թէ «վանքին եկեղեցւոյն գանձատանը մէջ կիսախաչ գաւազան մը կայ սև փայտէ, որուն թեւին մէկ երեսը գըրուած է. «կազմեցաւ գաւազանս Յակոբ վարդապետին ՌԾԲ (= 1603) րուին»: Միւս երեսն ալ գրուած է. «Տր. Ած. Յս. Քս. ուղորակաւ աշխատողաց սորա ամեն»: Սոյն գաւազանը կը կարծուի թէ Յակոբ եպոս. կուտինացիին է և հետը բերած է վանքը եկած միջոցին» (նոյն, էջ 38-39):

Ենթադրութիւն որ նուազ հաւանականութիւն կը ներկայացնէ, սակայն կըրնայ ճշդութիւն մըն ալ պարունակել:

Գրիգոր վրդ. Կեսարացիի աշակերտ և անոր դպրոցին հետևորդ նկատել պարծանք համարած են, ինչպէս կ'երևի՝ Մովսէս Տաթևացիի և անոր զլիսուոր աշակերտ Փլիպպոս Աղբակեցի կաթողիկոսներու աշակերտները:

Ասոնցմէ է Սաչատուր վրդ. Կեսարացի, Զուղայի Ամենափրկչեան վանքին հիմնադիրը և պարսկահայոց լուսաւորիչը, որ 1595-1601 կրնայ Կեսարիոյ մէջ աշակերտած ալ ըլլալ Կեսարացիին, գրած է 1627ին ներբողեան մը Գրիգոր պատրիարքին, որուն սկզբնատառերը կը կապեն «Գրիգոր Վարդապետ» բառերն և վերջատառերը «Սա-